

# ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Առաքինին իր գործած բարիքը չի մտաբերեր ու կը ցաւի այն բարիքներուն համար, որ ծուլութեան պատճառով չէ կատարած: Բարերարի երախտիքը միշտ կը յիշէ ու կրած անիրաւութիւնները կը մոռնայ: Իր ունեցածը բաւական կը համարէ, իսկ ուրիշներուն շատը՝ ոչինչ: Կ'ընկերակցի բարի մարդոց եւ չարերու հետ կապ չունենար: Մեծամեծներու դիմաց ակնածալից ու լուռ կը մնայ եւ հաւասարներու ու փոքրերու հետ քաղցրութեամբ կը վարուի: Հեզ ու խոնարհ բարիք ունի, քաղցրախօս ու սակաւախօս է եւ ամենուն հանդէպ հաւատարիմ: Յաջողութեան մէջ բարձրամտութիւն չ'ընէր եւ ձախորդութեան մէջ չի յուսահատիր: Քիչ մարդոց բարեկամ է եւ ո՛չ ոքի՝ թշնամի: Ամէնուն բարիք կ'ընէ կարողութեան համաձայն եւ ոչ ոքի չարիք չի պատճառեր, հակառակ անոր՝ որ կարող է:

Ամէն մեծագոյն շինուածք երկար ժամանակի ընթացքին կարող է անհետանալ, բայց բարի անունը՝ բնաւ չի կորսուիր: Նախընտրելի է մեռնիլ բարի անունով, քան թէ ապրիլ վատ համբաւով: Ով որ աշխարհի վրայ բարի համբաւ կը ձգէ՝ մահէն ետք ալ կենդանի կը մնայ, իսկ վատհամբաւը իր կեանքին մէջ մեռած է՝ եթէ նոյնիսկ երկար տարիներ ապրի:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

## ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ


ՈԳԻՆԵՐԸ, ԳԵՒԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԵՆ

### ԽԱՂԱԹՈՒՂԹՈՎ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ

**Հաւատացեալ կնոջ մը վկայութիւնը:**  
 Ի վերջոյ զիս ալ համոզեցին, որ գուշակի դիմեմ: Մտածեցի, որ այլեւս նշանակութիւն չունի՝ մեղք մը աւելի կամ պակաս, եւ գացի: Գուշակը պատմեց անցեալս, ապագայէս ալ որոշ հատուածներ, յետոյ անսպասելիօրէն ընդհատեց խօսքը եւ ըսաւ. «Այնպիսի վիճակի մէջ եմ, որ կարծես թէ մէկը աչքերուս առջեւ թուղթ կը բռնէ եւ այլեւս որեւէ բան չեմ տեսներ: Ուրիշ բան չեմ կրնար ըսել»: Յետոյ համոզուեցայ, որ մինչեւ ապաշխարանքիս օրը երկարող ապագան ճիշդ գուշակեր էր: Հասկցայ, որ մինչեւ այդ Մատանայի շղթաներուն մէջ եղած եմ: Գուշակին այցելելէ քանի մը օր ետք իմացայ, որ անիկա աստիճանէն ինկեր է եւ վիզը կտորեր: Սոսկալի վախ մը պատեց զիս: Յաճախ այնքան կը վհատէի, որ կը վախնայի՝ որ խելագարիմ: Կը թուի, թէ հողը կը փախչի ոտքերուս տակէն: Մեր ընտանիքը ցրուեցաւ. մայրս եւ եղբայրներէս մէկը Ամերիկա մեկնեցան: Ես նոյնպէս մեկնեցայ, բայց շուտով վերադարձայ: Սարսափելի բան մը տեղի կ'ունենայ ինծի: Հագիւ կը սկսիմ աղօթել, անմիջապէս վիճակս կը վատթարանայ, ջերմութիւնս կը բարձրանայ եւ կարծես օդի պակաս կը զգամ: Յաճախ մահամերձ կը դառնամ: Շատ կը վախնամ այդ ահաւոր...»

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

## ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐՈՂԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՂԻՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԱՆԵՐՈՂԻՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2012 ԹԻՒ 44

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄՄՏԹԷՆՈՍԻ 24.27-36**

Մարդու Որդին պիտի գայ կայծակի նման, որ երբ փայտակէ՛ կը լուսաւորէ ամբողջ երկնակամարը՝ արեւելէն արեւմուտք: Արծիւները կը հաւաքուին հոն ուր դիակ կայ:

Նեղութեան այդ օրերէն անմիջապէս ետք արեւը պիտի խաւարի եւ լուսինը այլեւս պիտի չփայլի. երկինքէն աստղերը պիտի իյնան եւ երկնային մարմինները պիտի սասանին: Ահա մարդու Որդին նշանը պիտի երեւի երկինքի մէջ եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողորան՝ երբ տեսնեն մարդու Որդին, որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած՝ գորութեամբ եւ մեծ փառով: Երբ մեծաձայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի դրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Թ՛գեմին թող ձեզի օրինակ ըլլայ: Երբ տեսնէք, որ անոր նիւղերը կը կակուղան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է: Նայնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին, գիտցէք թէ մարդու Որդին գալուստը մօտ է: Վստահ եղէ՛ք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նայնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան:

Սակայն ո՛չ ոք գիտէ թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը:

«Քրիստոսի հետ խաչին վրայ մեռայ եւ այլեւս կենդանի եմ ես չէ, որ կ'ապրիմ, այլ Քրիստոս է որ կ'ապրի իմ մէջս» (Գաղատացիներու 2.20): Քրիստոս յաւիտենական կեանքի դուռը բացաւ մեր առջեւ իր մահուամբը խաչին վրայ: Առանց մեր Տիրոջ մահուան ու յարութեան, մենք պիտի չկրնայինք յարութիւն առնել դէպի նոր կեանքը եւ նոր կեանքին համար: Քրիստոսի յարութեան օրինակը մեր վրայ առնելու համար, բացարձակ պայման է անոր մահուան օրինակը նաեւ առնելու մեր վրայ: «Քրիստոսի հետ խաչին վրայ» չմեռնողը, Քրիստոսով ու Քրիստոսի համար յարութիւն չի կրնար առնել: Սիրելի՛ ընթերցող, դուն մեռա՞ծ ես աշխարհի համար: Մեռցուցա՞ծ ես խաչին վրայ մարմինդ իր բոլոր ցանկութիւններով: Եթէ մեռցուցած ես, ուրեմն, «Քրիստոս է որ կ'ապրի» մէջդ:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ԳԻՒՏ ԽԱՉ



Քրիստոնէական տօներուն մէջ յատուկ տեղ կը գրաւէ գիւտ խաչի տօնը: 313 թուին, Միլանոյի հրովարտակով, երբ քրիստոնեաներուն արտօնուեցաւ ազատօրէն պաշտել նոր կրօնը՝ քրիստոնէութիւնը, Երուսաղէմը դարձաւ քրիստոնեաներուն ուխտավայրը: Աշխարհի չորս կողմէն քրիստոնեաներ ուխտի կ'երթային Երուսաղէմ:

327 թուականին, այս ուխտաւորներուն մէջն էր նաեւ Կոստանդիանոս Կայսեր մայրը՝ Հեղինէ թագուհին: Ան կ'ուզէր գտնել Յիսուսի խաչափայտը, որ կորսուած էր: Ուստի ան բարձրացաւ Գողգոթի լեռը: Այդ ժամանակ Գողգոթի լեռը կը գործածուէր իբրեւ աղբատեղի:

Հեղինէ թագուհին պեղել տուաւ այն տեղը, ուր կ'ենթադրէին գտնել Յիսուսի խաչափայտը: Անոր ենթադրութիւնը ճիշդ դուրս եկաւ եւ փորուած տեղէն ի յայտ եկան երեք խաչափայտեր: Գիտնալու համար, թէ ո՞րն է Յիսուսի խաչափայտը, իւրաքանչիւրը առանձնաբար դրին մեռած մանուկի մը դիակին վրայ: Երբ Յիսուսի խաչափայտը մօտեցուցին մանուկին, ան յարութիւն առաւ: Այսպիսով գիտցան Յիսուսի խաչափայտը, որ հետագային փոքր մասերու վերածելով բաժնեցին եկեղեցիներուն:

Մեր եկեղեցին այս տօնը կը յիշատակէ Խաչվերացի եօթներորդ Կիրակին, այսինքն՝ Հոկտեմբեր 23-էն 29-ի միջեւ:

Այս տարի, Մեր եկեղեցոյ տօնացոյցին համաձայն Գիւտ Խաչի տօնը կը գուգադիպի Կիրակի՝ 28 Հոկտեմբերին:

Կրնա՞ք մեզի բացատրել հայկական Խաչի ձեւին մասին

Այո, Հայկական Խաչը միշտ դատարկ կը ներկայացուի եւ անոր վրայ չենք հանդիպիր խաչուած Քրիստոսին: Ինչո՞ւ: Որովհետեւ այդպիսով մարդիկ ուզած են խորհրդանշել Քրիստոսի յաղթանակը մահուան առջեւ:

Հայկական խաչերը երբեմն կը ներկայացուին զարդարուած, խաղաղ, տերեւներով եւ ցորենի հասկերով: Ասոնք կը խորհրդանշեն կեանքը որ ծնունդ կ'առնէ խաչէն, որ այլապէս մահուան ծառայող գործիք մըն էր:

# ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

## ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ

Սէրը առաջին պատուիրանն է. թէ եւ կանոնական շարքով 12-րդ գլուխը կը կազմէ, սակայն եւ հին օրէնքին մէջ՝ Մովսէսի, եւ նորին մէջ՝ Քրիստոսի Աւետարանին, բոլոր պատուիրաններէն աւելի մեծն ու առաջինը կը համարուի: Օրէնքին մէջ գրուած է. «Տէր Աստուածդ պիտի սիրես քու ամբողջ սրտովդ, ամբողջ զօրութեամբըդ եւ ամբողջ մտքովդ» (Բ. Օրինաց 6.5), «եւ ընկերդ՝ անձիդ նման» (Ղեւտ. ԺԹ 19): Ինչպէս որ քու անձիդ չար բան չես ուզեր, նոյնպէս ընկերոջդ պէտք չէ փափաքիս. եւ ինչպէս որ քու անձիդ խնամք կը տանիս եւ բարին կը ցանկաս, նոյնպէս պէտք է ընկերոջդ ցանկաս, որովհետեւ ընկերոջ սէրը Աստուծոյ սիրոյն հաւասար է. ահա թէ ինչու Յովհաննէս աւետարանիչ կ'ըսէ. «Եթէ եղբայրդ որ կը տեսնես եւ չես սիրեր, Աստուած՝ որ չես տեսներ ի՞նչպէս կրնաս սիրել» (Ա. Յովհ. 4. 20): Ան որ կ'ըսէ, թէ կը սիրեմ զԱստուած, եւ եղբայրն ու ընկերը կ'ատէ, սուտ է որովհետեւ ան որ մարդասէր չէ, նաեւ աստուածասէր չէ:

Քրիստոս կ'ըսէ. «Միայն այն ատեն իմ աշակերտներս կ'ըլլաք եւ քրիստոնեաներ, երբ սիրէք զիրար: Ինչպէս որ ես սիրեցի ձեզ, դուք եւս պարտիք սիրել զիրար» (Յովհաննէս 13.35): Քրիստոս ինք այնպէս սիրեց մեզ, որ իր անձը մահուան մատնեց մեզի համար. նոյնպէս իւրաքանչիւր քրիստոնեայ պէտք է իր անձը մահուան յանձնէ իր եղբոր, ընկերոջ եւ հաւատակիցին համար: Արդ, ի՞նչ պատասխան պիտի տան անոնք՝ որոնք սիրոյ փոխարէն կ'ատեն ու կը չարախօսեն, կը մատնեն ու կը զրկեն:

# ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

## ՕԳՆՈՒԹԻՆ ԽՆԴԵԼՈՒ ԱՂՕԹԸ

Քոյ հաջող թող յեզի աճախէ ըլլայ, Տէ՛ր Յիսուս, երբ Հօրը փառքով երեւիս՝ լուսաւոր աշուտիս վրայ: Այս անսէ թող աշօթով զսխալ յետք՝ քեզի յոխաժողութեամբ ուրախանալս՝ քոյ անստիպանութեամբ, իբրեւ լոյսի որդիս եւ փրկութեան ժառանգորդս:

Օգնէ՛ յեզի, Տէ՛ր, օգնէ՛ յեզի, ո՛ր յեր փրկից Աստուծօ, քոյ յեզ անոխսի փառաւորութեան շնորհ: Տէ՛ր, փրկէ՛ յեզ եւ քանէ՛ յեր սերտը, քոյ սուրբ անոխսի շնորհ: Սուրբ եւ յաւաքան հաջող շնորհներս յեզ յաւաքան եւ յաւաքանս յեզ յաւաքանս եւ յաւաքանս յեզ յաւաքանս:

Փրկէ՛ յեզ յեզանսի եւ անստիպանութեամբ: Արժանի ըրէ՛ որ գոչութեամբ փառաւորութեամբ քեզ Հօրդ եւ Սուրբ Հոգիին շնորհ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտեանս: Ամեն:

**ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԳԻՐՔԷՆ**

14.1-8

Ուրիշ մը, որ ամեհի ալիքներու ընդմէջէն նաւով ցամաքորդելու կը պատրաստուի, փայտէ կուտփի մը կ'աղօթէ, փոխանակ վստահելու զինք փոխադրող նաւուն, որ թէեւ շահու համար հնարուած է եւ նարտար արհեստաւորի ձեռքով շինուած, սակայն դո՛ւն ես, ո՛վ Հայր, որ քու տեսչութեամբդ գայն կը վարես. դո՛ւն ես որ ծովուն մէջ ցամաք կը բանաս եւ ալիքներուն մէջ՝ ապահով շաւիղ, եւ ստով իսկ ցոյց կու տաս թէ ամէն վտանգէ կրնաս փրկել, նոյնիսկ եթէ անփորձ ըլլայ դեկի գլուխ կանգնողը:

Բայց քու կամփդ է՝ որ իմաստուն ստեղծագործութիւնդ մարդոց ծառայեալիս թէ ինչո՛ւ մարդիկ իրենց կեանքները կը վստահին ամենափոքր փայտին, եւ նոյնիսկ լաստով մը ալիքները նեղփելով ողջ-ստողջ տեղ կը հասնին:

Արդարեւ, ջրհեղեղի ատեն ալ, երբ ամբարտաւան հսկաները կորուստի մատնեցիր, Նոյ՝ աշխարհի յոյսը, լաստափայտին ապաւինեցաւ եւ քու ձեռքովդ առաջնորդուեցաւ, աշխարհի մէջ մարդկային սերունդը ապահովելու համար:

Հետեւաբար օրհնեալ է այն փայտը որ արդարութեան պատճառ կ'ըլլայ. բայց անիծեալ են թէ՛ ձեռագործ կուտքը եւ թէ՛ գայն շինողը, մէկը՝ գայն շինելու համար, իսկ փուն փայտը՝ Աստուած կոչուելուն համար:

**Շարունակել  
Աստուածաշունչէն**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ**

ՆԱՄԱԿԷՆ

ԿՈՐԻՆՔԱՑԻՆԵՐՈՒՆ

1.18-24

Խաչելութեան մասին խօսիլը յիմարութիւն կը թուի կորսուողներուն համար, մինչ մեզի՝ փրկութեան դիմողներու համար Աստուծոյ զօրութիւնն է անիկա: Արդարեւ մարգարէութեան մէջ գրուած է. *«Իմաստուններուն իմաստութիւնը պիտի խափանեմ, խելացիներու խելքը պիտի կորսնցնեմ»*: Այն ատեն ո՞ւր պիտի մնան իմաստունները կամ ուսեալները եւ կամ այս աշխարհի հարցերը քննող նարտասանները: Զէ՞ որ Աստուած ցոյց տուաւ թէ այս աշխարհի իմաստութիւնը յիմարութիւն է: Որովհետեւ աշխարհը իր ունեցած իմաստութեամբ չկրցաւ նանչնալ զԱստուած եւ անոր իմաստութիւնը, Աստուած ուզեց յիմարութիւն համարուած խաչին քարոզութեամբ փրկել հաւատացողները: Եւ քանի որ հրեաներ հրաշք կ'ուզեն, իսկ յոյներ իմաստութիւն կը փնտռեն, մենք խաչուած Քրիստոսը կը քարոզենք, որ գայթակղութիւն է հրեաներուն համար եւ յիմարութիւն՝ հեթանոսներուն համար, թէեւ նոյն այդ հրեաներէն եւ յոյներէն կանչուածները եւ դարձի եկածները Քրիստոսը կ'ընդունին որպէս Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ իմաստութիւնը:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ  
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ  
ՄԱՍՈՒՄՇԱՇԱՐՄԱՆԻՆ**